

Լուսինե Վ. Սարգսյան

## ԱՎԱԳ ԾԱՂԿՈՂԻ 1329 թ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

14-րդ դարի հայ մանրանկարիչ Ավագ Ծաղկողի 1329 թ. Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 7650) միջնադարյան հայ ձեռագրական արվեստի լավագույն նմուշներից է: Ավետարանի պատկերազարդումները բաղկացած են քեմատիկ մանրանկարներից, անվանաթերթերից, ավետարանիների պատկերներից և խորաններից: Վերջիններս գրեթե դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Նշանակութելու մեջ է հրատարակվել:

Սեր խնդիրն է ուսումնասիրել 1329 թ. Ավետարանի խորանների պատկերային համակարգը, խորհրդարանությունը, պարզաբանել պատկերագրական այն առնչությունները, որոնք գոյություն ունեն նրա խորանների և համաժամանակյա այլ հուչարձանների միջև:

Ձեռագրի խորանները սկսվում են ոմն Կարպիանոսին ուղղված՝ Եվսեբիոս Կեսարացու Թղթի երկու էջերով (էջ 3թ և 4ա), որոնց հաջորդող ուր խորանների մեջ ամփոփված են համարաբատի (համաձայնության տախտակների) տասը կանոնները (էջ 5թ, 6ա, 7թ, 8ա, 9թ, 10ա, 11թ, 12ա): Հանդիպակաց էջերի խորանազարդերը կառուցվածքով նման են իրար: Էջերի դաշնության այդ ձգտումը, ըստ Կարլ Նորդենֆալկի, գալիս է նախատիպից, որտեղ հանդիպակաց խորանների նախշազարդերի մոտիվները կրկնվել են նույնությամբ<sup>1</sup>:

Եվսեբիոսի և Կարպիանոսի երկու հանդիպակաց էջերը (նկարներ 1, 2) գրավում են իրենց անթերի համաշափությամբ: Դրանք կազմված են երկու հիմնական տարրերից՝ ուղղանկյուն ճակատազարդից և այուների մեջ ամփոփված տեքստային մակերեսից: Այդ հիմնական կառուցվածքը կանգնում է իրեն պատվանդան ծառայող հորիզոնական նախշազարդ երկարավուն երիգի վրա: Տեքստադաշտն ու այուները ճակատազարդից բաժանվում են պատվանդանի երկարությանը հավասար հորիզոնական հեծանով: Պետք է ասել, որ գլխազարդի բարձրությունը հեծանի հաստության հետ միասին և տեքստադաշտը, գրեթե մոտենում են ոսկե հատման հարաբերության:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.09.2011:

1 Էջիածնի 989 թ. Ավետարանի, ինչպես նաև հայկական և հունական ավետարանների հանդիպակաց խորանների մոտիվների նմանությունը, վաղ շրջանում նաև նույնությունը, Նորդենֆալկը համարում է նախատիպի նշան: Տես Nordenfalk C., Die spätantiken kanontentafeln, 2 Bde., Goteborg, 1938, Textband, pp. 90-91.

Գ (թ) դադի, թագի 4 (36) հեղինակի դեկտիվիդը, 2011

Վել համայնշական համբաւ

Այս երկու խորաններում ճակատազարդի կենտրոնում ներկայացված են Եվստրիոսի և Կարպիանոսի պատկերները. երեք քառորդով միմյանց ուղղված կիսանդրիներ՝ կտրված գոտիկատեղից: Նրանցից յուրաքանչյուրը ձեռքում ունի փաթեթ: Եվստրիոսը օրինության նշան է անում, իսկ Կարպիանոսը ձեռքը պարզել է դեպի նա: Ավագ Ծաղկողի մոտ Եվստրիոսը ներկայացված է ալեգարդ ձերունու տեսքով՝ ընդունված պատկերագրության համաձայն: Սակայն Կարպիանոսը, որ սովորաբար պատկերվում է երիտասարդ, բուխ մորուսով, այստեղ զարմանալիորեն ներկայացված է հասուն տարիքում՝ մերմակ մորուսով: Կարպիանոսի կերպարի այս ինքնատիպ մեկնաբանությունը վկայում է նկարչի իմքնուրույն և անկաշկան ստեղծագործական աշխատանքի մասին:

Եվստրիոսի և Կարպիանոսի դիմանկարներն առնված են պայտանման կամարի ներքո, որից ասես լույս է ճառագում: Գլածորի մանրանկարիչ Թորոս Տարոնացու 1307 թ. և 1323 թ. Ավետարաններում Եվստրիոսը և Կարպիանոսը նույնպես ներկայացված են այսպիսի կամարների ներքո: Նման հորինվածք հանդիպում է նաև 1306 թ. առաջ Գլածորում ծաղկված մեկ այլ Ավետարանում (ձեռագիրը պահպում է Կալիֆոռնիայի համալսարանում, թիվ 170/466), որի պատվիրատուի անունը հայտնի չէ<sup>2</sup>: Այս պահնողություն Գլածորի նկարիչները կարող էին փոխառել թե՛ հայաստանյան (օրինակ՝ Գրիգոր Շաղկողի 1232 թ. Թարգմանչաց Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 2743), թե՛ կիլիկյան մանրանկարչությունից (օրինակ՝ 1262 թ. ռոպինյան Ավետարանը (Քարիմոր, Ուղթերս արվեստի հավաքածու, ձեռ. 539), 13-րդ դարի 70-80-ական թթ. ծաղկված մատյանը (Մատենադարան, ձեռ. 9422):

Պայտանման շրջանակի շուրջ պտտվում են ականթատերների շրջանաձև ոլորազարդեր: Նույնպիսի ոլորազարդ հանդիպում ենք նաև հայ քանդակագործության նմուշներում, օրինակ՝ 1219 թ. Բջնիում կառուցված խաչքարի քիվի զարդարանդակում: Այս նույն հորինվածքը չնշին փոփոխություններով տեսնում ենք նաև Տարոնացու 1323 թ. Ավետարանի խորանների նկարազարդումների միջև ընդհանրությունները շատ են. ճակատազարդերի կենտրոնական նախշերը, այսունազումներում խոյսկներում, պատկերված մարդկային գլուխները, այս հիմքերում՝ խարիսխներում, ներկայացված կենդանիները և այլն, սակայն դրանց գուգահեռ կան նաև պատկերագրական մի շարք տարրերություններ, որոնք հուշում են, որ Ավագ Ծաղկողը կուրորեն չի ընդօրինակել այս կամ այն նախօրինակը, այլապես նրա ստեղծագործության ինքնուրույն քննարկումը կիմներ անհմաստ:

Ավագ Ծաղկողի ձեռակերտն առանձնանում է ձևերի և միջոցների չափավոր ընտրությամբ. այս կերպ նկարիչն ասես խոսափում է ավելորդ մանրամասնություններից, փորձում դիտողի ուշադրությունն առավել ըստու Եվստրիոսի և Կարպիանոսի խոհուն կերպարների վրա: Նկարների առաջին գույգ խորաններում գլխազարդերի կողքերին պատկերված են կապիկներ, որոնք իրենց քարերում պահում են վառվող մոմով աշտանակներ և այսպես կոչված «գունդ-խաղալիք»

<sup>2</sup> Ըստ Թ. Մեթուուսի՝ այս ձեռագրի նկարազարդումներն իրականացրել են չորս նկարիչներ: Նրանցից մեկի անունը, որ գիտակոր նկարիչն է եղել, անհայտ է, իսկ մնացած երեքը վերջինիս աշակերտներն են եղել, որոնցից կրտսերը Թորոս Տարոնացին է: St. Mathews T., The Gladzor Gospel Book of U.C.L.A., «Յայ արվեստին նվիրված երկրորդ միջազգային սիմպոզիում», h. 4, Եր., 1981, էջ 33:

կամ «խնձոր-խաղալիք»<sup>3</sup>: Այս պատկերը հաճախ է հանդիպում կիլիկյան (1293 թ. Սկսուայի Ավետարանը, Մատենադարան, ձեռ. 5784), գլածորյան (Տարոնացու վերը թվարկված երկու ձեռագրերը, նաև 1318 թ. Եսայի Նշեցու Աստվածաշունչը, Մատենադարան, ձեռ. 206) մատյաններում: Աստվածաբանական գրականության մեջ կապիկների մասին հիշատակվում է Հովհան Ռոկերանի ճառում, ուր ասվում է, որ Մովսեսը և Ահարոնը հրեաններին դրու բերեցին Եգիպտոսից, որտեղ մարդիկ շուն, կոկորդիլոս և կապիկ էին պաշտում<sup>4</sup>:

Դակատագարդի շրջանակը, հեծանը, պատվանդանը և սյուները զարդարված են բուսական նախշերով, որոնց հաճախ կիանդիպենք ձեռագրի մյուս խորաններում: Այս զարդանախշերը մեծ մասամբ փոխանակած են Գլածորի նկարիչներ Մոմիկի, Տարոնացու արվեստից: Արանք, մի փոքր վերամշակվելով Ավագ Ծաղկողի կողմից, հանդիպում են նաև նրա ծաղկած մյուս ձեռագրերում:

Ուղանկյուն ճակատագարդի վերևում պատկերված է ոճավորված խաչ, որի երկու կողմերում կանգնած են կարմրակտուց և կարմրատոտիկ թռչուններ, որոնք կան նաև սյուների կողքերին պատկերված արմավածուերի վրա: Խաչը և նրա երկու կողմերում պատկերված թռչունները նույնությամբ կրկնվում են Ավագ Ծաղկողի ավելի ուշ՝ ծաղկած՝ 1337 թ. Ավետարանի համանուն մանրանկարներում (Մատենադարան, ձեռ. 212):

1329 թ. Ավետարանի առաջին խսկ ձևավորումներում արտահայտված են մյուս բոլոր խորաններին բնորոշ իորինվածքային ու նախշային առանձնահատկությունները: Այս ձեռագրի խորանների գեղարվեստական հարդարումն ըմբռնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև խորանների պատկերագրումների խորհրդարանությունը՝ ըստ հայ միջնադարյան հեղինակների ավանդած մեկնությունների:

Հարց է ծագում. արդյո՞ք Ավագ Ծաղկողի մոտ պահպանվել է խորանների բովանդակած խորհրդարանական համակարգն այն ձևով, ինչպես ավանդել են 8-րդ դ. անվանի փիլսոփա, գրող ու քարգմանից Ստեփանոս Սյունեցին և կաթողիկոս, քանատեղ ու մտածող Ներսես Շնորհալին խորանների՝ իրենց թողած մեկնություններում: Իհարկե, մեկնությունների բովանդակած կանոնները նկարիչները, այդ բվութ Ավագ Ծաղկողը, չեն իրականացրել բոլոր կետերով: Միևնույն ժամանակ որքան էլ մրագնվեր կամ փոփոխվեր խորանների խորհրդարանությունը, այն չեր կարող անհետանալ վերջնականապես:

Ստորև կտեսնենք այդ մեկնությունների ուղղակի կամ անուղղակի անդրադարձ 1329 թ. Ավետարանի խորանների ձևավորումներում:

Խորանների առաջին զույգը (էջ 5թ և 6ա, նկարներ 3, 4) քննելիս տեսնում ենք, որ ճակատագարդի կենտրոնում գետեղված է եռալյունետ սրածայր կամար (բնորոշումը՝ Ս. Տեր-Ներսեսյանի)<sup>5</sup>, ներսում վեր է խոյանում ոճավորված կենաց ծառը, որի հիմքից դուրս են գալիս ականքատերի շրջանաձև ոլորագարդեր: Եռամաս սրածայր կամարի հանդիպում ենք նաև խաչքարային արվեստում: Օրինակ՝ 1291 թ. Պողոս վարպետի քանդակած խաչքարը՝ պատրաստված Գոշում (այժմ՝ Հայաստանի պատմության պետական քանդարան), 1308 թ. վարպետ Մոմիկի քանդակած խաչքարը, որը կառուցվել է Նորավանքում Թաթմա խարուն իշխա-

3 Մանացական Ա., Դայլական զարդարվեստ, Եր., 1953, էջ 501:

4 Տես Ռոկերան Յ., ճառը, Վենետիկ-Արք. Ղազար, 1861, էջ 58:

5 Տես Der-Nersessian S., Manuscrits Arméniens illustres des XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des peres Mekhitaristes de Venise, Paris, 1936-37, texte et album, p. 148.

նուին համար (այժմ՝ Էջմիածնի Մայր աթոռի բակում): Գուցե Ավագ Ծաղկողի համար օրինակ է ծառայել Գլածորի ավագ սերնդի վարպետի հիշյալ ստեղծագործությունը: Նույնպիսի խորինվածք հաճախ է հանդիպում 13-րդ դ. կիլիկյան ձեռագրերում (օրինակ՝ 1297 թ. Գրիգոր Պիծակի ծաղկած Ավետարանի Դուկասի անվանաբերքի ճակատազարդում): Կամարների եռամասնությունը գուցե հետևում է Ն. Շնորհալու այն մեկնությանը, որ առաջին խորանը պատկերում է Սուրբ Երրորդությունը<sup>6</sup>:

Կամարի աջ և ձախ կողմերում ներկայացված են ոտքերի վրա կանգնած կենդանիներ: Ճակատազարդի նման հարդարում հանդիպում է Տարոնացու 1323 թ. Ավետարանի երկրորդ գույզ խորաններում (էջ 7թ, 8ա): Սակայն տարբեր են ճակատազարդի վրա և կողքերին նկարազարդված պատկերները: Եթե 1323 թ. ձեռագրում ճակատազարդի վրա տեսնում ենք սափորներ, շուրջը՝ բոչուններ, ապա 1329 թ. մատյանում՝ ձկնկուլներ: Ըստ հայ միջնադարյան աստվածաբանական գրականության՝ կամարի վրա պատկերված հավքերը՝ ձկնաքաղերը, ջրի մեջ որս են անում և կրում Ակրտության խորհուրդը:<sup>7</sup> Հարկ է նշել, որ խորանների մեզ ծանոթ մեկնություններում առաջին անգամ հենց այստեղ է առաջըալներին խորհրդանշող ձկնաքաղ հավքերի հետ հանդես գալիս Ակրտության խորհուրդը:<sup>8</sup> Ձկնկուլ հանդիպում ենք նաև Տարոնացու հիշյալ ձեռագրի խորաններից մեկում (էջ 10ա), ուր, սակայն, ձկնկուլը ոչ թե ձուկ, այլ օձ է փորձում կուլ տալ:

Ավագի ծաղկած կորողում ճակատազարդի կողքին տեսնում ենք թատերականացված տեսարան: Մինչեռ Տարոնացու մոտ պատկերված են սիրամարգեր: Հայկական մանրանկարներում հաճախ խորանների հեծանների ծայրերին կարելի է հանդիպել վարժեցված կենդանների (կամ գուցե՝ մորթի հազած մարդկանց), որոնք որոշակի դերակատարություն ունեն: Զեռագրի էջ 5թ խորանում վարժեցված կենդանին նվազում է թառի նմանվող երաժշտական գործիքի վրա: Իսկ ահա էջ 6ա խորանում լարախաղաց կենդանին ներկայացնում է այսպես կոչված «գնդակախաղ»: Ըստ Ա. Մնացականյանի՝ լարախաղացների պատկերումը մանրանկարներում նախաքրիստոնեական արվեստից եկած վերապրուկ է, և դրանք խորհրդանշում են կենդանակերպ նախնուն:<sup>9</sup>

Մասյանի խորանների երկրորդ գույզը (էջ 7թ, 8ա, նկարներ 5, 6) ներկայանում է կենտրոնում եռանկյան պատկերով ուղղանկյուն ճակատազարդով: Այս մոտիվը նոյնությամբ կրկնում է 1323 թ. Ավետարանի էջ 5թ և 6ա խորանների ձկանվորումը: Ընդհանրապես, ոչ միայն գլածորյան, այլև 12-14-րդ դդ. կիլիկյան հուշարձաններում այս զարդանախչը հաճախ է հանդիպում (Մատենադարան, ձեռ. 7737, էջ 335ա): Գլածորում այս մոտիվի տարածված լինելը, հավանաբար, ոչ թե կիլիկյան, այլ տեղի մանրանկարչական ավանդությների հետ է կապվում, քանզի 12-րդ դ. Բարձր Հայքի տարբեր գրչատներում ստեղծված ձեռագրերում այն հաճախ է պատկերվում (Մատենադարան, ձեռ. 2877, էջ 15թ, 16ա):

Եռանկյունում մեջ պատկերված են բուսական նախշեր, որոնց ոճավորումը հիշեցնում է հակառակ կողմերից իրար ազուցված սրտեր: Ճակատազարդի կողքերին նկարազարդված են հուշկապարիկներ՝ կանացի գլուխներով և թոշնի մարմնով էակներ: Հուշկապարիկներից մեկը ներկայացված է տղամարդու գլխով:

<sup>6</sup> Տես Ղազարյան Վ., Խորանների մեկնություններ, Եր., 1995, էջ 51:

<sup>7</sup> Տես նոյն տեղում, էջ 22:

<sup>8</sup> Տես նոյն տեղում, էջ 152:

<sup>9</sup> Տես Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 469:



Նկար 1, 2. Եվսեբիոս Կեսարացու Թուղթը Կարպիանոսին (Խորաններ)

Ձեռագրերում սակավ թվով, սակայն պահպանվել են նկարների այնպիսի օրինակներ, որտեղ կանացի գլուխների փոխարքն պատկերված են տղամարդկային գլուխներ (օրինակ՝ Սատենադարան, ձեռ. 4827, էջ 50թ, ձեռ. 5458, էջ 60ա): Պատկերվելով հանդիպակաց էջերում արանք հայացքներով իրար են նայում: Կարծես Ավագ Ծաղկողն այս կերպ փորձել է ընդգծել երկու խորանների իրար հաղորդակից լինելը:

1329 թ. Ավետարանի խորանների երրորդ գույզը (էջ 9թ և 10ա, նկարներ 7, 8) ներկայանում է հայկական մանրանկարչության մեջ ամենատարածված հորինվածքներից մեկով: Ուղղանկյուն ճակատազարդի կենտրոնում պատկերված է ծիածանաձև ոռմբանման նախշ, որը հատվում է կենտրոնական մեղալինից դրւու եկող երեք այլուներով: Այս մոտիվը հանդիպում է դեռևս 11-րդ դ. հայկական խորանարվեստում (1053 թ. «Բեզյոնց» Ավետարանում՝ էջ 1թ, Սուղնու Ավետարանում՝ էջ 7ա, 10թ): Անշուշ, թերված օրինակները նույնությամբ չենք տեսնում Ավագ Ծաղկողի վրձնած խորաններում, թեպետ ընդհանուր հորինվածքը նույնն է, իսկ փոփոխությունները ավելի շատ ձևաբանական բնույթի են:

Ճակատազարդի մակերեսը լցնում է ականթատերևի շրջանաձև ոլորազարդը, որը տեսանք առաջին երկու խորաններում: Հատ երևույթին, սա նկարչի նախընտրած զարդներից է, քանզի մյուս ձեռագրերում նույնպես հաճախ է հանդիպում: Այս ոլորազարդը ոչ միայն հայկական գեղանկարչության, այլև քանդակագործության մեջ է պատկերվել: Դրա գողտրիկ ապացույցն է վերը հիշատակված՝ 1219 թ. Բջնիում քանդակված խաչքարի քիվի զարդանախշը:

Ճակատազարդի ընդհանուր հորինվածքը մերձենում է 1166 թ. Կիլիկիայում



Նկար 3. Առաջին խորան




Նկար 4. Երկրորդ խորան

ծաղկված ձեռագրի (Մատենադարան, ձեռ. 7347) խորանների (էջ 7թ, 8ա) հետո: Նրանում պատկերված են ոսկեզգեստ փետորներով զարդարված գույզ աքաղաղներ, որոնց մասին հիշատակություններ կան Ն. Շնորհալու մեկնություններում: Մեծն փիլիստիկան աքաղաղներին դիտում է իրքն մարգարենների խորիդանիշ<sup>10</sup>: Անհայտ միջնադարյան հեղինակի մեկ այլ մեկնության մեջ ասվում է. «Ինչպես աքաղաղները գուշակում են առավոտը, այնպես էլ մարգարենները՝ ջրիստոսի գալուստը»<sup>11</sup>:

Վերջին գույզը հանդիսացող խորաններում (էջ 11թ, 12ա, նկարներ 9, 10) ճակատազարդը հարդարված է գորգանման զարդանախշով: Երկու խորանների նախշերը չեն կրկնում իրար: Դրանցից առաջինում (էջ 11թ) քառատերև սրտանման նախշեր են, իսկ երկրորդում (էջ 12ա) քառաբերք ծաղկային մոտիվ է: Այս նախշը քաջածանոք է կիլիկյան մանրանկարչությունից (օրինակ՝ 1290 թ. Թոռոս քահանայի ծաղկած Ավետարանի խորաններից մեկը, Մատենադարան, ձեռ. 5736, ինչպես նաև՝ 13-րդ դ. 70-80-ական թթ. Մատենադարանի N 9422 ձեռագրի էջ 1թ և 248ա պատկերը), ապա գլանորյան հուշարձաններից (օրինակ՝ Կիլիկիայում և Գլանորում ապրած և ստեղծագործած Մատթեոս նկարչի 1292 թ. Ավետարանի Հովհաննեսին և Պրոյսորոնին ներկայացնող մանրանկարը (Մատենադարան, ձեռ. 6292): Դժվար է ասել՝ Գլանորի մանրանկարիներն այս մոտիվը փոխ են առել կիլիկյա՞ն, թե՞ հայաստանյան արվեստից, քանզի 1160 թ. Խարբերում ստեղծված ձեռագրի (Մատենադարան, ձեռ. 10360) Մատթեոսի և Մարկոսի անվանաբերքերի ճակատազարդերում ևս հանդիպում է այս զարդա-

10 Տե՛ս Ղազարյան Վ., Աշվ. աշխ., էջ 25, 150:  
11 Նույն տեղում, էջ 41:



Նկար 5. Երրորդ խորան

նախշը: S. Ա. Իզմայլովան քառարերթ այս ծաղկամոտիվի պատկերումը կապում է 10-րդ դ. հունական երկու ձեռագրերի հետ (Փարիզի Ազգային գրադարան, ձեռ. 195, 139), որոնց նկարազարդումներում, երկու դեպքերում է՝ Մատթեոսի անվանաբերերում, կրկնվում է այդ նախշը<sup>12</sup>: Ըստ Կ. Վայցմանի՝ հունական այս երկու ձեռագրերը միևնույն դպրոցի գործերն են<sup>13</sup>:

Ծակատազարդի կողքերին պատկերված են սիրամարգեր՝ տարրեր դիրքերով: Սրանք անչափ նրբագեղ են՝ շնորհիվ փետրավոր պոչերի, երկար և քարակ պարանոցների: Սիրամարգերից մեկի գլուխը, ցավոք, կտրված է (հավանաբար ձեռագիրը կազմելու ժամանակ է այն կտրվել): Ըստ մեկնությունների հեղինակների՝ սիրամարգերը խորհրդանշում են հրեշտակների անարատ բնությունն ու նահապետների խորհուրդը<sup>14</sup>: Այս թշունները կանգնած են առատության խորհուրդ ունեցող եղջյուրների վրա, որոնցից դուրս են գալիս ծաղիկներ: Սիրամարգերն իրենց փակված պոչերով և կանգնելու դիրքով չեն կրկնում Տարոնացու 1323 թ. Ավետարանի սիրամարգերին:

Մանրանկարների վերին մասում՝ ծակատազարդերի վրա, պատկերված են սկիհ, սափոր, որոնք խորհրդանշում են հավատի աղբյուրը: Այդ աղբյուրից սնվում են շուրջը պատկերված թշունները, որոնք իշխեցնում են կաքավ կամ լոր:


Ավագ Ծաղկողին, անկասկած, ծանոթ են եղել Ստ. Սյունեցու մեկնությունները: Այդ է Վկայում իններորդ և տասներորդ խորանների բացակայությունը, ավելի ճիշտ՝ դրանց համակցումը ութերորդին: Ըստ Սյունեցու՝ այդ երեք խորանները համաձայն են միմյանց և միասին զարդարված<sup>15</sup>:

12 Տես Измайлова Т., Заглавные листы Харбердской рукописи, ГРЭ, Ер., 1975, № 4, էջ 163-164:

13 Տես K. Weitzmann, Die byzantinische Buchmalerei des IX und X. Jahrhunderts, Berlin, 1935, p. 10, 11.

14 Տես Ղազարյան Վ., Եշվ. աշխ., էջ 21:

15 Տես Ղազարյան Վ., նույն տեղում, էջ 37:



Նկար 7. Յինգերորդ խորան




Նկար 8. Վեցերորդ խորան

1329 թ. Ավետարանի խորանների մանրամասն քննությունը երևան է հանում բազմաթիվ ուրիշ լնդիանքություններ հայաստանյան և կիլիկյան ձեռագրերի հետ: Խոսքը վերաբերում է զարդարյին որոշակի մոտիվներին, որոնք պարբերաբ հանդիպում են խորանների տարբեր մասերում:

Այդպիսի մոտիվներից հիշարժան է հովհարածն բացված նախշը, որը հանդիպում է Եվսեբիոսի և Կարպիանոսի Թղթի ճակատազարդի եզրագոտիններում (Էջ 3թ, 4ա) և խորանների երրորդ գույզի (Էջ 9թ, 10ա) սյուներում: Հովհարաննան այս նախշը մի փոքր ավելի մեծ չափերով տեսնում ենք Էջ 9թ և 10ա խորանների սյուների խոյակներում և խարիսխներում: Այս նախշազարդը բազմից հանդիպում է գլածորյան հուշարձաններում (Մոմիկի, Տարոնացու ստեղծագործություններում): Նախքան Գլածորում հայտնվելը, այն տեսնում ենք կիլիկյան մի շարք ձեռագրերում:

Խորանների սյուների համար պատվանդան հանդիսացող հորիզոնական գոտիններում պատկերված են «Գագարներով միմյանց հանդեպ հակված երկու սեղմենտներ» (Տ. Իզմայլովայի բնորոշումը) (Էջ 5թ, 6ա, 11թ, 12ա) և բուսական հանգուցանախշեր (Էջ 3թ, 4ա, 7թ, 8ա, 9թ, 10ա): Այդ երկու սեղմենտները կրկնվում են նաև ճակատազարդերի կողային գոտիններում (Էջ 5թ, 6ա, 7թ, 8ա): 12-13-րդ դդ. Բարձր Հայրում ստեղծված ձեռագրերում այս զարդանախշը մեծ մասսամբ հանդիպում է անվանաբերթերի և խորանների ճակատազարդերում՝ որպես կենտրոնական հորիզոնական հիշյալ խարքերոյան օրինակի Հովհաննեսի անվանաբերթում, 1200 թ. Ավագ Քանրում ստեղծված ձեռագրի Ղուկասի անվանաբերթում (Նյու Յորքի Գևորգյան հավաքածու, ձեռ. 6), 1232 թ. Գրիգոր Ծաղկողի վրձնած



Նկար 9. Յոթերորդ խորան



Նկար 10. Ութերորդ խորան

Թարգմանչաց Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 2743)<sup>16</sup> յոթերորդ և ութերորդ խորաններում): Հորինվածքի այս ձևը քաջ ծանոթ է նաև կիլիկյան ձեռագրերից: Ըստ S. Իզմայլովայի՝ այս հորինվածքի հիմքն է կազմում 11-րդ դարի հայտնի հունական օրինակը<sup>17</sup>:

Երկրորդ և երրորդ գույգ խորանների խոյակներն ու խարիսխներն իրենց զարդանախերի նմանության շնորհիվ մտովի երկրաչափական նուանկյուններ են հիշեցնում: Զարդարան այս փոխկապակցվածությունը վկայում է նկարչի սուրբ դիտողականության մասին:

Ուշագրավ են սյուների կողքերին պատկերված նրբագեղ ծառերը: Նրանցից երկուսը նոնենիներ են (էջ 5թ, 8ա): Ստ. Սյունեցու մեկնությամբ՝ նոնենին Հին կտակարանով և մովսեսյան խորանով մատնանշում է նորը՝ իր ներսում ամփոփելով դառը կեղևով պտղի քաղցրությունը<sup>18</sup>: Մյուս ծառերը հիշեցնում են տարբեր ոճավորումներով արմավենիներ (էջ 3թ, 4ա, 6ա, 7թ, 11թ, 12ա) կամ էլ պարզապես ծաղկափրիթ երևակայված ծառեր են (էջ 9թ, 10ա): Դրանցից մեկից (էջ 6ա) կախված են խաղողի ողկույզներ: Նման հորինվածք առկա է նաև Տարոնացու 1323 թ. Ավետարանի խորաններում:

Այս ծառերի վրա պատկերված աղավնակերպ թռչուններն այնքան փոքրիկ ու նուրբ են, որ նրանց կարելի է նմանեցնել նաև ճնճղուկների հետ: Այս թռչունները տարբերվում են Տարոնացու ծաղկած թռչուններից, որոնք պատկերված են թևա-

16 Տե՛ս Չուգասյան Լ., Գրիգոր Շաղկող, Եր., 1986, էջ 23:

17 Տե՛ս Измайлова Т., Заглавные листы Харбердской ..., с. 161.

18 Տե՛ս Ղազարյան Վ., նշվ. աշխ. էջ 35:

տարած, թութակի կտուցներով և չափերով ավելի մեծ են:

Հստ Սյունեցու մեկնության՝ աղավնակերպ այդ թռչունները, որ տերունական պատկերներում խորհրդանշում են Սք. Հոգուն, խորաններում ունեն մեկ այլ խորհրդաբանություն. դրանք խորհրդանշում են Սուրբ Հոգուց ներշնչվածներին:<sup>19</sup> Իսկ չորս կաքավ հավերը, որ նույնապես հանդիպում են մատյանի պատկերազարդումներում, խորհրդանշում են չորս անբար օտարազգի (ոչ հրեա) կանանց՝ Ուարախին, Թամարին, Հոռորդին և Սողոմոնի մորը՝ Բերսարեհին<sup>20</sup>:

Թռչունների հանդիպում ենք նաև երկրորդ և երրորդ գույգ խորանների խարիսխներում և խոյակներում: Իսկ Եվսեբիոսի և Կարպիանոսի մթրի, նաև առաջին գույգ խորանների (էջ 5ր և 6ա) սյուների խոյակներում պատկերված են կատվազգի կենդանիներ և մարդկային գլուխներ: Այս պատկերազրությունը կրկնվում է 1323 թ. խորաններում:

Չնայած երկու ձեռագրերի միջև եղած ընդհանրություններին՝ Ավագ Ծաղկողի երկը տարրերվում է չժանրաբեռնված զարդային համակարգով: Օրինակ՝ 1323 թ. մատյանի խորանների բոլոր սյուները մանրակրկիտ մշակված զարդանախշ ունեն, մինչդեռ Ավագ Ծաղկողի մոտ ոչ բոլոր սյուներն են այդպիսին: Հաճախ նա բավարարվում է սրանց լոկ երանգային լուծումներ տալով (վարդագույն, դեղին և կապույտ):

Հստ մեկնիչների տված վերլուծությունների՝ այս երեք գույները պատահական չեն ընտրված. վարդագույն սյուները մերձավոր փրկություն են ցույց տալիս, որ հայտնվում է իր ժամանակին<sup>21</sup>, կապույտ սյուներն Օրենքի տասը պատղամների խորհուրդներն են<sup>22</sup>, դեղին (ծիրանի) սյուները ցույց են տալիս Աստվածային արռողի հաստատությունը<sup>23</sup>: Ավագ Ծաղկողի՝ այս մեկնություններին ծանոթ լինելը հաստատելու են գալիս գունային այն լուծումները, որ նկարիչը տվել է հինգերորդ և վեցերորդ խորաններին: Հստ Սյունեցու մեկնության՝ հինգերորդ խորանում ստվերը պակասում է և կարմիրը պայծառանում՝ ի նշան Քրիստոսի անապական մարմնի, արյան և քրիստոնեական հավատի<sup>24</sup>: Հստ Ծնորհալու մեկնության՝ հինգերորդ և վեցերորդ խորաններում ավելացավ կարմիր գույնը, քանի որ տապանով և Աքրահամի վրանով պայծառացան Քրիստոսի արյան խորհուրդը և եկեղեցու առարինությունը, որ հավատն է<sup>25</sup>:

1329 թ. Ավետարանի խորաններում Ավագ Ծաղկողը հասել է գեղարվեստական պատկերի լուծման կատարյալ ներդաշնակության: Համամասնությունների կատարելությունը, ճարտարապետական և զարդանկարային սկզբունքների հարաբերակցության չափը պայմանավորում են հորինվածքի տոնական հանդիսավորությունը: Այդ բանին մեծապես նպաստում է նաև գունավորումը, որտեղ գերիշխում են ոսկու հետ համադրված երկնագույնն ու վարդագույնը, բոլոր հորինվածքներում նկատվող կարմիրի ու կանաչի առավել մուգ երանգները:

Խորանների զարդանկարային նշանակությունը առավել մեծանում է՝ շնորհիվ զանազան դիրքերով և շարժման մեջ պատկերված տարրեր թռչունների, նաև կենդանական աշխարհի ներկայացուցիչների առկայության:

19 Տե՛ս Ղազարյան Վ., նույն տեղում, էջ 150:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 35, 55:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 41:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 39:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 34:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 35:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 51:

## Եզրակացություններ

1329 թ. Ավետարանի խորանների քննությունը ցոյց է տալիս, որ դրանք կարենոր տեղ են գրադեցնում Ավագ Ծաղկողի ստեղծագործությունների շարքում և արժանի են առանձին ուսումնասիրության:

Այլ հուշարձանների հետ առնչությունների ուսումնասիրությունը բույլ է տալիս պարզել, թե որտեղից են սնվում Ավագ Ծաղկողի վրձնած զարդածները: Նրա խորանների զարդարվեստը մեզ տանում է դեպի հայկական մանրանկարչության կիլիկյան ավանդույթները, որոնք հաստատում տեղ են գրադեցնում նաև գլածորյան զարդարվեստում, և, բացի այդ, մեզ հրամցնում է այնպիսի զարդածներ, որոնք բխում են վաղ շրջանի բուն հայկական զարդարվեստից:

1329 թ. Ավետարանի խորանարվեստում զգացվում է նաև վարպետի ինքնուրույն, համարձակ ստեղծագործական մոտեցումը: Ուր որ նա հնարավորություն է ունեցել նահանջել ընդունված կանոններից, նահանջում է եռանդագին՝ աշխատելով հնարավորինս ճշմարտացի պատկերել իր տեսած բույսերը և երևույթները (բռչուններ, նոնենու ճյուղեր, ծաղկեներ և այլն): Այս տեսանկյունից Ավագ Ծաղկողի երկը սկզբունքորեն տարրերվում է Տարոնացու 1323 թ. վրձնած խորաններից, որոնք փայլվելու են ոսկուց և ներկերից, ապշեցնում բուսական զարդերի մեջ տեղափոխված զանազան երևակայված տեսարաններով և զարմանահրաշեկներով:

Այսպիսով, Ավագ Ծաղկողի հրաշակերտ խորաններն իրենց հորինվածքով և զարդային մոտիվներով ամփոփում ու միևնույն ժամանակ շարունակում ու զարգացնում են նախընթաց դարաշրջանների գեղազարդային հնարքները: Դրանցից յուրաքանչյուրն ինքնին ավարտուն ստեղծագործություն է:

## Summary

### AVAG TSAGHKOGH'S ICONOGRAPHY AND SYMBOLISM IN THE CANON TABLES OF THE 1329 GOSPEL

Lusine V. Sargsyan

The examination of the canon tables of the Gospels of 1329 (an index of the four synoptic Gospels, Matthew, Mark, Luke and John which works like a concordance; usually displayed under decorated arches in vertical columns and placed at the beginning of the Gospel Books) played an important role in the works of Avag Tsaghkogh and are worthy of a separate assessment.

The study of relations with other monuments makes it possible to identify where Avag's range of ornaments derived from. The decoration of these canon tables employed by Avag takes us to the Cilician traditions of Armenian miniature painting, which have their stable role in the ornamental paintings of Gladzor. In addition to this, the ornament of canon tables by Avag provides us with types, which are derived from the early period of Armenian decorative paintings.

In the art of canon tables of the 1329 Gospel one can also sense the master's independent and courageous approach to the art form. Whenever he had the possibility to defer from adopted norms, he did so diligently, trying to reflect truthfully plants and surroundings (birds, pomegranate branches, flowers, etc.) as accurately, as possible. In this regard the work of Avag significantly differs from the canon tables painted by Taronetzi in 1323, which glitter with gold and paints, and create the element of surprise with imaginary sceneries and miraculous creatures.

Thus, Avag Tsaghkogh's miraculously created canon tables with their imaginary and decorative motifs summarize and at the same time continue and develop the decoration techniques of the previous centuries. Each of the canon tables on its own is a complete piece of art.